ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 212 - Ա
22 սեպտեմբերի 2014 թ.

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱԳԻԿ ԼԵՎԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ–728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճքի հիմնական դպրոցի տնօրենի 2014 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 157 հրամանով համակարգչային օպերատորի պարտականությունների կատարումից Սոֆի Գևորգյանին և գործավարի պարտականությունների կատարումից Էլմիրա Սիրականյանին ազատելիս՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի, 110-րդ հոդվածի 1-ին մասի, 115-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջները խախտելու և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները չպահպանելու համար <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լիճքի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գագիկ Լևիկի Մկրտչյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ <<Խիստ նկատողություն>>:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ